ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 08.10.2002

- Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ
- Գլուխ 2. Բարեգործության մասնակիցները
- Գլուխ 3. Բարեգործական կազմակերպությունները, դրանց ստեղծման եւ գործունեության առանձնահատկությունները
- Գլուխ 4. Բարեգործական պետական երաշխիքները
- Գլուխ 5. Բարեգործության իրականացման նկատմամբ վերահսկողությունը եւ պատասխանատվությունը
- Գլուխ 6. Միջազգային բարեգործություն
- Գլուխ 7. Եզրափակիչ դրույթ

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է բարեգործության իրականացման ընթացքում ծագող հարաբերությունները, սահմանում է բարեգործության կարգավորման իրավական հիմքերը, նպատակները, իրականացման սկզբունքները, պետության կողմից բարեգործությանն աջակցելու ձեւերը, բարեգործական կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունները:

Հոդված 2. Բարեգործության նպատակը

Բարեգործության նպատակն է՝

1) աջակցել այն ֆիզիկական անձանց (հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, գործազուրկներին), ինչպես նաեւ սակավ ապահովված ընտանիքներին, որոնք չեն կարող ինքնուրույն ապահովել իրենց նյութական եւ հոգեւոր պահանջները.

2) աջակցել ոչ առեւտրային այլ կազմակերպություններին.

3) նյութական օգնություն տրամադրել պատերազմի, տարերային աղետների, վարակիչ հիվանդությունների, համաճարակների եւ արտակարգ այլ իրավիճակների հետեւանքով տուժած անձանց եւ մասնակցել դրանց հետեւանքների վերացմանը.

4) աշխատատեղերի ստեղծման կամ գործազուրկների վերապատրաստման ճանապարհով աջակցել սոցիալական օգնության կարիք ունեցող գործազուրկներին՝ աշխատանքի տեղավորման հարցում.

5) աջակցել գիտության, կրթության, արվեստի, գրականության, առողջապահության, սպորտի եւ ֆիզկուլտուրայի ոլորտների ծրագրերի իրականացմանը.

6) աջակցել պատմական, ճարտարապետական, մշակույթի եւ արվեստի հուշարձանների պահպանման եւ վերականգնման ծրագրերի իրականացմանը.

7) աջակցել բնության եւ շրջակա միջավայրի պահպանման եւ բարեկարգման աշխատանքների իրականացմանը.

8) աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած սոցիալական ծրագրերի իրականացմանը:

Հոդված 3. «Բարեգործություն» հասկացությունը

1. Բարեգործությունը ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից սույն օրենքի 2-րդ հոդվածի նպատակների իրականացման համար ֆիզիկական անձանց եւ ոչ առեւտրային կազմակերպություններին կամավոր, անշահախնդիր, օրենքով չարգելված (անհատույց կամ արտոնյալ պայմաններով) նյութական եւ հոգեւոր օգնության (այսուհետ՝ բարեգործական աջակցության) տրամադրումն է:

2. Բարեգործություն չի համարվում կուսակցություններին եւ առեւտրային կազմակերպություններին դրամական եւ այլ նյութական միջոցների հատկացումը:

Հոդված 4. Բարեգործության իրավական կարգավորումը

Հայաստանի Հանրապետությունում բարեգործությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով, իրավական այլ ակտերով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հոդված 5. Բարեգործության իրականացման սկզբունքները

Բարեգործության իրականացման սկզբունքներն են՝

1) սոցիալական արդարության պահպանումը.

2) մարդասիրության ամրապնդումը եւ տարածումը.

3) մարդկային արժանապատվության պահպանումը.

4) սերունդների համերաշխության ամրապնդումը.

5) սոցիալական հասցեականության պահպանումը.

6) սոցիալական խնամառության բացառումը.

7) ազգային խտրականության բացառումը:

Հոդված 6. Բարեգործություն իրականացնելու իրավունքը

1. Ֆիզիկական եւ իրավաբանական անձինք բարեգործություն իրականացնում են կամավորության եւ նպատակների ազատ ընտրության սկզբունքով՝ անհատապես կամ համատեղ, անձամբ կամ միջնորդավորված:

2. Արգելվում է սույն օրենքով սահմանված բարեգործության նպատակների եւ իրականացման ձեւերի ընտրության ազատության սահմանափակումը:

ԳԼՈՒԽ 2.

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Հոդված 7. Բարեգործության մասնակիցները

Բարեգործության մասնակիցներ են բարեգործները, կամավորները, բարեգործություն ստացողները: Բարեգործական կազմակերպությունները կարող են հանդես գալ եւ§ որպես բարեգործ, եւ§ որպես բարեգործություն ստացող:

Բարեգործության մասնակիցներ (բարեգործներ, բարեգործություն ստացողներ) կարող են լինել նաեւ Հայաստանի Հանրապետությունը եւ համայնքները:

Հոդված 8. Բարեգործները

Բարեգործներն այն ֆիզիկական եւ իրավաբանական անձինք են, որոնք սույն օրենքի 2-րդ հոդվածում նշված նպատակներով բարեգործություն են իրականացնում:

Հոդված 9. Կամավորները

Կամավորներն այն ֆիզիկական անձինք են, ովքեր սույն օրենքի նպատակներից ելնելով՝ կատարում են անհատույց աշխատանքներ բարեգործություն ստացողների օգտին:

Հոդված 10. Բարեգործություն ստացողները

Բարեգործություն ստացողներն այն ֆիզիկական եւ իրավաբանական անձինք են, որոնք իրենց համաձայնությամբ ստանում են բարեգործական աջակցություն:

ԳԼՈՒԽ 3.

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 11. Բարեգործական կազմակերպությունները

Բարեգործական կազմակերպությունները ոչ առեւտրային այն կազմակերպություններն են, որոնք իրականացնում են սույն օրենքով սահմանված բարեգործական աջակցություն:

2. Բարեգործական կազմակերպության անվանումը պետք է ներառի «բարեգործական» բառը:

3. Բարեգործական կազմակերպություններն ստեղծվում են հասարակական միավորումների, հիմադրամների, ինչպես նաեւ օրենքով նախատեսված այլ ձեւերով:

4. Պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող լինել բարեգործական կազմակերպության հիմադիրներ:

Հոդված 12. Բարեգործական կազմակերպության գույքի օգտագործման առանձնահատկությունները

1. Բարեգործական կազմակերպությունները չեն կարող որպես նվիրատվություն ընդունել որեւէ գույք՝ ի շահ նվիրատուի օգտագործելու պայմանով:

2. Բարեգործական կազմակերպությունն աշխատակազմի վարձատրության եւ տնտեսական ծախսերի համար կարող է օգտագործել այդ կազմակերպության կողմից յուրաքանչյուր ֆինանսական տարվա ընթացքում ստացված եկամուտների մինչեւ 20 տոկոսը, բացառությամբ նվիրաբերությունների տեսքով ստացված այն եկամուտների, որոնց վերաբերյալ բարեգործը սահմանել է այլ պայմաններ:

3. Դրամական նվիրաբերությունների եւ նվիրատվությունների ոչ պակաս, քան 80 տոկոսը պետք է օգտագործվի բարեգործական կազմակերպության կողմից այդ աջակցությունն ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, եթե բարեգործի կողմից կամ բարեգործական ծրագրով այլ բան նախատեսված չէ: Բնամթերային նվիրաբերությունները եւ նվիրատվություններն ամբողջությամբ ուղղվում են բարեգործական նպատակների իրականացմանը՝ դրանց պիտանիության ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան դրանք ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ բարեգործի կողմից կամ բարեգործական ծրագրով:
Սահմանված ժամկետներում բարեգործական կազմակերպությունների կողմից դրամական եւ բնամթերային նվիրաբերություններն ու նվիրատվությունները չօգտագործելու դեպքում դրանց օգտագործման ժամկետները կարող է երկարաձգել լիազորված մարմինը՝ մինչեւ վեց ամիս ժամկետով:

Բնամթերային նվիրաբերությունների եւ նվիրատվությունների օգտագործման ժամկետները կարող են երկարաձգվել դրանց պիտանիության ժամկետների սահմաններում:

Նշված ժամկետներում դրամական եւ բնամթերային նվիրաբերություններն ու նվիրատվությունները չօգտագործելու դեպքում դրանք կարող են բռնագանձվել դատական կարգով: Բարեգործական նպատակով Հայաստանի Հանրապետություն ներկրվող ապրանքները վերագնահատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 13. Բարեգործական ծրագիրը

1. Բարեգործական ծրագիրը ոչ առեւտրային կազմակերպության կողմից, սույն օրենքի նպատակներին համապատասխան, որոշակի խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների նկարագրությունն է, որը հաստատվում է տվյալ կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով: